

## ԳՈՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին, ամենէն ժողովրդական տօներէն է ԳՈՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ: Տօն՝ որ կը զուգահիսի ամեն Նորեմբերի չորրորդ Յինգզաբթի օրուան:

Տօնը՝ իւրայատուկ է Միացեալ Նահանգներուն, թէեւ՝ Գանատան եւս ունի իրը, որ կը տօնուի ամեն Յոկտեմբերի երկրորդ Երկուշաբթի օրը:

Տօնը, որ համազգային բնոյթ ունի, իր մէջ կը խտացնէ մարդկայնական ազնիւ գաղափարներ. երախտապարտութիւն, շնորհակալական զգացում, հիւրասիրութիւն, իրարօգնութիւն եւ ամենէն հիմնականը՝ Աստուածավախութիւնն ու աղօթքը: Բոլորը՝ բարոյական բարձր արժէքներ, որոնք բաղձալի եւ տիպար ընկերութեան մը յատկանիշները պիտի կազմէին:

Տօնին առիթով՝ Միացեալ Նահանգներու ամբողջ տարածքին կը ստեղծուի ընկերային զգայուն ու քաղցր մթնոլորտ մը: Մարդիկ՝ կարծէք կը դառնան աւելի՛ բարի, աւելի՛ ազնիւ: Չգալի կը դառնայ, որ ամեն ոք իր անհատական ընթացիկ կեանքէն դուրս ելլելով՝ կը մտածէ իր հարազատներուն, ազգականներուն, հին ու նոր եւ լաւ բարեկամներուն մասին: Ամեն ոք կարօտ մը կը զգայ բոլորին նկատմամբ: Կը մտածէ նաեւ, թէ ինչպէ՞ս կամ ի՞նչ ձեւով կրնայ օգնել, օգտակար դառնալ շրջապատին, ուրիշներուն: Անհատներ, բարեսիրական կազմակերպութիւններ, հաստատութիւններ կը տրամադրուին նոյնիսկ հանգանակութիւններ կատարելու: Կը ձեռնարկեն ոչ թէ մեծ դրամահաւաքի, այլ՝ փոքր գումարներ ապահովելու, այն համեստ ու խոնարհ ոգիով եւ նպատակով, որ կարելի ըլլայ նուազագոյնը մէկ օրուան համար, մէկ ժուլ լիառատ ճաշ կամ կերակուր տրամադրել ընտանիքի մը, անտունիի մը, անպաշտպան ու կարեկցութեան կարօտ անձի մը: Նոյնիսկ թերթերու մէջ կոչեր կը տեսնուին, որ մարդիկ միայն քանի մը տոլար նուիրաբերեն, որով կարելի ըլլայ բաւարարել նուազագոյնը մէկ անձ:

## ԳՈՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒՄՆ ԾԱԳՈՒՄԸ

Գոհաբանութեան Օրուան ծագումը սերտօրէն առնչուած է 1620 թուի Սեպտեմբեր 16ին, Անգլիոյ Փլիմութ (Plymouth) քաղաքէն «Մէյֆլաուր» նաւով գաղթականներուն, որոնք Ամերիկա կը հասնին 66 օր արկածախնդրական ու դժուարին ճամբորդութենէ մը ետք:

Խճողուած նաւուն ճամբորդները բաժնուած կ'ըլլան երկու հակադիր խումբերու: Մէկ խումբին անդամները իրենք իրենց կը կոչեն «Սուրբեր», իսկ միւսները՝ «Սուրբեր»ուն կողմէ կ'անուանուին «Օտարներ» (Strangers):

Յամաք հասնելէ ետք, հակադիր խմբաւորումները կը համաձայնին, որ բոլորը իրենք գիրենք կոչեն Գաղթականներ՝ իրաւահաւասար իրաւունքներով: Անոնք կ'ընտրեն իրենց առաջին կառավարիչը, յանձին՝ ճոն Գարվըրի (John Carver):

1620 թուի Փլիմութի այս գաղթականները առաջին տարին կ'ապրին սաստիկ ցուրտ, յուսալքիչ եւ դժուարին տարի մը: Շատեր կը մահանան գանազան դժուարութիւններու բերումով:

1621ին, գաղթականները բախտաւորութիւնը կ'ունենան աշնանային առատ բերք, հունձք ունենալու: Ժողովուրդին մէջ կը փոխուի ընկերային մթնոլորտը: Նոր կեանքի մէջ բարելաւ եւ յուսադրիչ հեռանկարներ կը տեսնուին: Այդ առիթով, ատենի կառավարիչ Ուիլեմ Պրետֆորտ (William Bradford) կոչ կ'ուղղէ ժողովուրդին, որ ստացուած առատ բերքերուն համար կատարուի տօնախմբութիւն, աղօթելու եւ փառք տալու համար Աստուծոյ: Կառավարիչը կը թելադրէ նաեւ տօնախմբութեանց սիրալիր կերպով մասնակից դարձնել ամերիկածին բնիկները, առ ի գնահատութիւն անոնց գործակցութեան:

Պատմաբաններ այն կարծիքին են, որ առանց բնիկներու գործակցութեան եւ օգնութիւններուն, դժուար թէ գաղթականները կարենային գոյատեւել:

Այդ պայմաններուն մէջ, առաջին տօնախմբութիւնը ուրիշ բան չէր, եթէ ոչ աշխատանքի, հունձքի, առատ բերքահաւաքի շնորհակալական զգացումներով Աստուծոյ փառք տալու, աղօթելու տօնախմբում, ինչ որ անգլիացիները Անգլիոյ մէջ աւանդաբար ունէին, նման հին այլ ժողովուրդներու, ինչպէս՝ հայերը, յոյները, հռոմայեցիները, եգիպտացիները, չինացիները, հնդիկները, հրեաները, եւ այլք:

Հոս յայտնենք, որ յիշեալ ժողովուրդները բերքահաւաքէ ետք, ընդհանրապէս ունեցած են իրենց կրօնա-ժողովրդային տօնախմբութիւնները, նախաքրիստոնէական ժամանակներէն սկսեալ: Օրինակ, հայերը՝ որոնք այս տօնախմբութիւնը կատարած են Օգոստոսի կէտերուն, կամ՝ Նաւասարդեան օրերուն:

Հրեաները՝ Հոկտեմբերին, իրենց Եոմփիբուրէն 5 օր ետք, Սուքքոթ անունով:

Չինացիները՝ իրենց Տրդ ամսուան լիալուսին, երբ իրարու լուսնածել կարկանդակ հրամցնելու սովորութիւնը ունեցած են:

Յոյները՝ իրենց ընդեղէններու եւ հացահատիկներու աստուածուհիներուն՝ Տիմիթրիին (Demeter):

Հռոմայեցիները՝ դարձեալ իրենց եգիպտացորենի Սերես (Ceres) աստուածուհիին:

Եւ վերջապէս եգիպտացիները, որոնք եգիպտացորենի բերքահաւաքէն ետք կը կազմակերպէին մարզական եւ երաժշտական փառատօն, ներկայութեամբ՝ փառաւոնին, փառաբանանք ու պատիւ մատուցելէ ետք բեղմնաւորութեան եւ առատ կուրքի աստուածուհիին, որ կը կոչուէր Մին (Min): Եգիպտացիները տօնախմբութիւնը կը կատարէին զարնան:

## **ՏՕՆԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ**

Յիշեալ առաջին տարուան հաւաքական փառաբանանքէն կամ Գոհաբանութեան Օրէն ետք, յաջորդող տարիներուն ձեռնարկը կրկնուեցա՞ւ:

Պատմական արձանագրություններ եւ փաստեր չկան: Սակայն հաւանական է, որ տեղի ունեցան:

Այսուհանդերձ, տպաւորիչ առաջին հաւաքը իր հոգեհունչ խորքով՝ կը մնայ կենդանի մարդոց մտքերուն մէջ, կ'արմատաւորուի եւ ժամանակի ընթացքին կը դառնայ աւանդ: Վստահ, որ կը կրկնուի ամէն տարի: Շուրջ 150 տարիներու ընթացքին, ան կը դրսեւորուի իբրեւ ոչ-պաշտօնական, այլ ժողովրդական ինքնաբոլիս ձեռնարկ:

Գոհաբանութեան Օրուան խիստ ժողովրդական եւ սրտամօտ տարեկան տօնախմբութիւնը ուշադրութեան նիւթ եղած է Ամերիկայի պատմութեան մէջ, գրեթէ բոլոր ժամանակներուն, կառավարիչներուն եւ նախագահներուն մօտ:

Առաջին ընդհանուր հաղորդագրութիւն մը, 1621էն ետք, կատարուած է 1676ին, Մասաչուսեթի Չարլսթաուն (Charlestown, Massachusetts) քաղաքին մէջ:

1770ական թուականներու երկրորդ կիսուն, Ամերիկեան յեղափոխութեան տարիներուն, Ամերիկայի գաղութներու մայրցամաքային Գոնկրէսը (Continental Congress), կազմուած 1774ին, կ'առաջադրէ, որ Գոհաբանութեան Օրը նկատուի Ազգային Տօն:

1789ին, նախագահ Ճորճ Ուաշինկթըն, կազմուած նոր Սահմանադրութեան (1788) ուրախ առիթով, Գոհաբանութեան Օրուան մասին կը հրապարակէ առաջին նախագահական հաղորդագրութիւնը:

1817ին, Նիւ Եորքի նահանգը Գոհաբանութեան Օրը կը դասաւորէ իր տարեկան տօներու շարքին:

19րդ դարու առաջին կեսերուն, բազմաթիւ նահանգներ կ'որդեգրեն եւ կը տօնախմբեն զայն:

1863ին, նախագահ Աբրահամ Լինքըլն Գոհաբանութեան Օրը կը մասնաւորէ իբրեւ ազգային տօն, տօնելի՛ ամէն Նոյեմբերի 4րդ Յինգշաբթին:

Յաջորդող նախագահները յստակ հաղորդագրութիւններով կը կրկնեն նոյնը:

1939ին, նախագահ Ֆրէնքլին Ռուզվելթ, նախագահական հաղորդագրութեամբ մը, Գոհաբանութեան Օրը կը տեղափոխէ Նոյեմբերի 3րդ Յինգշաբթի օրուան, փոխանակ 4րդ Յինգշաբթիին:

1941ին, Միացեալ Նահանգներու Օրէնսդիր ժողովը՝ Գոնկրէսը, եւ նոյն նախագահը՝ Ֆրէնքլին Ռուզվելթ, Գոհաբանութեան Օրը վերջնականապէս կը ճշդորոշեն կատարել Նոյեմբերի 4րդ Յինգշաբթի օրը եւ անոր կու տան օրէնքի ուժ, ինչ որ կը նշանակէ՝ գործադրելի բոլոր նահանգներուն կողմէ:

## ԳՈՅԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԵՒ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ակներեւ է, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գոհաբանութեան Օրուան տօնը, ժամանակի ընթացքին, թէ՛ ըստ ձեւի, թէ՛ ըստ էութեան փոփոխութիւններ կրած է: Ան տօնուած է նաեւ տարբեր ամիսներու եւ տարբեր թուականներու ընթացքին՝ Սեպտեմբեր, Յոկտեմբեր, Նոյեմբեր...:

Առաջին տարուան՝ 1621 թուի աշնան տոնախմբութիւնը մասնաւորուած կ'ըլլայ բաւարարելու ժողովորդի երախտագիտական եւ կրօնական զգացումները առ Աստուած:

Աղօթքը, ուտելիքը կը տեւեն երեք օր, ինչ որ աւանդաբար հիմքը կը նկատուի, որ ներկայիս եւս տօնը երկարի երեք օրերու վրայ:

Թէ՛ այդ երեք օրերուն ի՞նչ տեսակ կերակուրներ բերուեցան սեղաններուն, անյայտ է: Յիշատակութիւն կայ, որ այդ մարդիկ որսորդական ու ձկնորսական ճիգերով Ատլանտեանի ափերէն առատ մտելէն ապահովեցին: Ձուկ, ձկնեղէն, վայրի բադ, սագ եւ մերձակայ անտառներէն ալ, այլ թռչուններ եւ որսածու կենդանիներ: Հաւանաբար, սեղաններուն բերուած է նաեւ հնդկահաւ:

Կիները՝ դաշտային բարիքներէն կաթնեղէններով, եգիպտացորենով, ամերիկեան դդումով (squash) կը լրացնեն ճաշացուցակը:

Անուշեղէն (pie, cake...) չէ եղած, շաքարի եւ բուռերու չգոյութեան կամ սակաւութեան պատճառով:

Տօնախմբութիւնը անելի շատ եղած է համայնքային, բնիկներուն յատկանշական մասնակցութեամբ:

Գոհաբանութեան օրուան ներկայի ժողովրդային բնոյթը հետզհետէ կը կազմաւորուի 19րդ դարու ընթացքին: Այս նոյն շրջանին է, որ մեծ ժողովրդականութիւն կը ստանայ հնդկահաւը, իբրեւ տօնախմբութեան գլխաւոր ճաշ: Այնքան՝ որ նախագահ Պենճամին Ֆրէնքլին առիթով մը կ'արտայայտէ այն գաղափարը, որ ամերիկեան զինանշանին իբրեւ խորհրդանիշ՝ ընդունուի հնդկահաւը, փոխան անգարդ ու ճաղատ Արծիւին...: Նախագահը այն համոզումը ունեցած է նաեւ, որ հնդկահաւը Հիւսիսային Ամերիկայի հողերու հարազատ ծնունդն է եւ արտադրութիւնը:

Այսուհանդերձ, Գոհաբանութեան Օրուան ու ճաշին մէջ հնդկահաւի մասնակցութիւնը ունի պատմա-աւանդական այլ հիմունքներ եւս. օրինակ, երկրորդ կառավարիչ Ուիլեյմ Պրետֆորտի ժամանակաշրջանին, Էտուըրտ Ուինսլօ (Edward Winslow) անունով գաղթական մը Անգլիա յղած իր մէկ նամակին մէջ կը նկարագրէ, թէ ինչպէս կառավարիչը, Գոհաբանութեան Օրուան առիթով, չորս որսորդներ կը դրկէ թռչնորսութեան եւ անոնք կը վերադառնան հնդկահաւերով, բաղերով եւ սագերով...:

Գոհաբանութեան Օրուան ճաշացուցակին մասին յայտնենք, որ ներկայիս աւանդութիւն դարձած է նաեւ սեղան բերել եփուած եւ քաշուած (կամ ճզմուած) գետնախնձոր (mush potatoes), քրեմպըրի, կամ անոր թացանը (sauce). քրեմպըրին՝ կարմրաւուն, մանր հատիկներով եւ թթուի մօտ համով պտուղ մըն է:

Աւանդութիւն է դարձեալ, իբրեւ քաղցրեղէն, Գոհաբանութեան Օրուան ճաշացուցակին մէջ ունենալ դդումի անուշը (pie):

Հաստատուած իրականութիւն է, որ այս տօնին առիթով տեղի կ'ունենայ ամենամեծ թիւով ճամբորդութիւն, Միացեալ Նահանգներու մէջ: Հեռաւոր նահանգներէ եւ քաղաքներէ, նոյնիսկ արտասահմանէն բազմահազար քաղաքացիներ տուն կու գան, իրենց հարազատներուն, ազգականներուն, բարեկամներուն եւ մտերիմներուն հետ բաժնելու համար Գոհաբանութեան Օրուան խորհուրդը նկատուող սրտակցութեան, մարդկայնութեան, կարօտի եւ ընտանեկան աղուոր զգացումները:

Միացեալ Նահանգներու Նախագահը Գոհաբանութեան Օրուան առիթով ճառ կը խօսի եւ ինքնուրոյն կը մեկնաբանէ Գոհաբանութեան տօնին խորհուրդին պարունակ՝ բարոյական հարուստ արժէքները:

Նախագահը եւ ամենաբարձր պաշտօնատարներ երբեմն կը ճամբորդեն երկիրներ, համեստ ու եղբայրական օրեր անցընելու եւ միասնաբար ճաշելու այն բոլոր քաղաքացիներուն հետ (մասնաւորաբար բանակայիններ), որոնք հարկադրաբար եւ ի պաշտօնէ կը մնան երկրէն հեռու:

Դարձեալ, երկրի ամբողջ տարածքին, կրօնական դէմքեր եւ առաջնորդներ օրին, կարեւորութեան կ'անդրադառնան Գոհաբանութեան Օրուան իմաստին, անշուշտ շեշտը դնելով ընկերութեան մօտ երախտագիտութեան կարեւորութեան, Աստուածավախութեան եւ անոր կրօնական ու բարոյական արքեքներուն վրայ:

Մշակութային գետնի վրայ, կը կազմակերպուին ձեռնարկներ, կը տրուին դասախօսութիւններ, միշտ լուսարձակի տակ առնելով տօնին՝ Գոհաբանութեան Օրուան, ընկերային եւ բարոյական թելադրանքները:

Ժողովրդային գետնի վրայ, յայտնենք, որ Նաեւ ուսանողութեան համար, Գոհաբանութեան Օրը սպասուած եւ սիրելի տօն է:

Աշակերտներ՝ ինքնաբոխ կերպով հաւաքական ճաշ կը կազմակերպեն, անշուշտ՝ հնդկահաւը իբրեւ գլխաւոր ճաշը, եւ իբրեւ մեծ ընտանիքի մը հարիւրաւոր ընկերներ եւ ընկերուհիներ, կ'աղօթեն, միասին կը ճաշեն, իրարու կը սպասարկեն եւ կը հաղորդուին համապատասխան եղբայրական զգացումներով:

Յայտնենք, որ Գոհաբանութեան Օրուան առնչութեամբ կարելի է տակաւին անդրադառնալ եւ թուել շատ-շատ այլ երեւոյթներ, որոնք հետզհետէ աւանդութեանց բնոյթ կը ստանան. խոստովանինք սակայն, որ անոնք բոլորը թէեւ հետաքրքրական, սակայն անսպառ են:

Հուսկ հաստատենք, որ Գոհաբանութեան Օրուան համաժողովրդային եւ գեղեցիկ այս տօնը ոչ միայն Միացեալ Նահանգներու մէջ, այլեւ աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար կրնայ նկատուիլ Նախանձելի՝ իր ընկերային եւ դաստիարակչական իմաստով, կրօնա-ազգային եւ բարոյական խորքով եւ թելադրականութեամբ: